ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-510-05.05.2014-ՏՀ-010/2

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9.2-րդ հոդվածում՝

1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված կամ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ շշալցված, փաթեթավորված կամ ցանկացած այլ ձևով տարայավորված՝ սույն հոդվածով ներկայացված աղյուսակում ներառված ապրանքների վրա օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե օրենքով սահմանված՝ համապատասխան ծածկագրով ապրանքային դիրքում ընդգրկվող ապրանքներն արտադրողի կամ այլ փաթեթավորողի կողմից փաթեթավորված (չափածրարված), շշալցված կամ այլ կերպ տարայավորված են նույն փաթեթավորմամբ ու ապրանքային տեսքով, առանց քաշը (ծավալը) փոփոխելու, մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար:».

աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողերով.

«0401	կաթ և սերուցք՝ ոչ խտացված և առանց շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելման	կաթնեղեն
0402	կաթ և սերուցք՝ խտացված կամ շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելմամբ	կաթնեղեն
0403	թան, մակարդված կաթ և սերուցք, յոգուրտ, կեֆիր և այլ ֆերմենտացված կամ խմորված կաթ և սերուցք՝ խտացված կամ ոչ խտացված, շաքարի հավելմամբ կամ առանց շաքարի կամ այլ	կաթնեղեն

	քաղցրացնող նյութերի հավելման, համաբուրային հավելումներով կամ առանց դրանց, մրգերի, ընկույզների կամ կակաոյի հավելմամբ կամ առանց դրանց	
0901	սուրճ՝ բոված կամ չբոված, կոֆեինով կամ առանց կոֆեինի, սուրճի կեղև և սուրճի հատիկների թաղանթ (պատյան), սուրճի փոխարինիչներ՝ ցանկացած համամասնությամբ սուրճ պարունակող	սուրճ
0902	թեյ՝ համաբուրային հավելումներով կամ առանց դրանց	թեյ
0903 00 000	մատե կամ պարագվայական թեյ	թեյ
1507	սոյայի ձեթ և դրա ֆրակցիաներ՝ ռաֆինացված կամ չռաֆինացված, սակայն առանց քիմիական բաղադրության փոփոխության	ձեթ
1508	գետնանուշի ձեթ և դրա ֆրակցիաներ՝ ռաֆինացված կամ չռաֆինացված, սակայն առանց քիմիական բաղադրության փոփոխության	ձեթ
1509	ձիթապտղի ձեթ և դրա խառնուրդամասեր՝ չզտված կամ զտված, բայց առանց քիմիական բաղադրության փոփոխության	ձեթ
1512 11 910	արևածաղկի ձեթ	ձեթ
1512 19 900	արևածաղկի ձեթ	ձեթ
1515 21 900	եգիպտացորենի ձեթ և դրա ֆրակցիաներ	ձեթ
1515 29 900	եգիպտացորենի ձեթ և դրա ֆրակցիաներ	ձեթ
1602	պատրաստի կամ պահածոյացված մթերքներ մսից, մսի ենթամթերքներից կամ արյունից	մսեղեն
1604	պատրաստի կամ պահածոյացված ձուկ, թառափազգիների խավիար և դրա փոխարինիչներ՝ պատրաստված ձկնկիթի հատիկներից	ձկնեղեն
1605	պատրաստի կամ պահածոյացված	ձկնեղեն

	խեցգետնակերպեր, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ	
2001	բանջարեղեն, մրգեր, ընկույզներ և բույսերի այլ ուտելի մասեր՝ պատրաստված կամ պահածոյացված քացախի կամ քացախաթթվի հավելմամբ	պահածո
2002	լոլիկներ (պոմիդոր)՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի	պահածո
2003	սնկեր և գետնասնկեր՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման	պահածո
2004	այլ բանջարեղեն՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման, սառեցված, բացի 2006 ապրանքային դիրքում նշված մթերքներից	պահածո
2005	այլ բանջարեղեն՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման, չսառեցված, բացի 2006 ապրանքային դիրքում նշված մթերքներից	պահածո
2006	բանջարեղեն, մրգեր, ընկույզներ, պտուղների կեղև և բույսերի այլ մասեր՝ շաքարի միջոցով պահածոյացված (շաքարի օշարակով ներծծված, շաքարահյութով պատված, շաքարահյութով եփված, շաքարված)	պահածո
2007	ջեմեր, մրգային ժելե, մարմելադներ, մրգային կամ ընկույզի պյուրե, մրգային կամ ընկույզի մածուկ՝ ստացված ջերմային մշակումից, այդ թվում՝ շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելմամբ	պահածո
2008	մրգեր, ընկույզներ և բույսերի ուտելի այլ մասեր՝ պատրաստված կամ պահածոյացված այլ եղանակով՝ շաքար	պահածո

	կամ այլ քաղցրացնող նյութեր կամ սպիրտ պարունակող կամ չպարունակող՝ այլ տեղում չհիշատակված կամ չներառված	
2101 20	թեյի (պարագվայական թեյի) կամ մատեի հավելումներ և խտանյութեր, դրանց կամ թեյի (պարագվայական թեյի), մատեի հիման վրա պատրաստված պատրաստի արտադրանք	թեյ
2105 00	պաղպաղակ և սննդային սառույցի այլ տեսակներ՝ կակաո պարունակող կամ չպարունակող	պաղպաղակ

2209 00	քացախ և դրա փոխարինիչներ՝ ստացված քացախաթթվից	քացախ
3304	կոսմետիկ միջոցներ կամ դիմահարդարման և մաշկի խնամքի այլ միջոցներ (բացառությամբ դեղամիջոցների), ներառյալ՝ արևայրուքի դեմ կամ արևայրուքի համար միջոցներ, ձեռքերի կամ ոտքերի մատնահարդարման միջոցներ	կոսմետիկա
3305	մազերի խնամքի միջոցներ	կոսմետիկա
3401	օճառ, մակերևութային ակտիվ օրգանական նյութեր և միջոցներ, որպես օճառ կիրառվող (կտորների, քառակողիկների կամ կաղապարվածքների ձևով)՝ օճառ պարունակող կամ չպարունակող, մակերևութային ակտիվ օրգանական նյութեր և մաշկը լվանալու համար միջոցներ՝ հեղուկների կամ քսուքների տեսքով՝ կշռաբաշխված մանրածախ առևտրի համար՝ օճառ պարունակող կամ	օճառ

	չպարունակող, թուղթ, բամբակ, թաղիք կամ նրբաթաղիք (ֆետր) և չհյուսված նյութեր՝ ներծծված կամ պատված օճառով կամ լվացող միջոցով	
3402	մակերևութային ակտիվ օրգանական նյութեր (բացի օճառից), մակերևութային ակտիվ նյութեր, լվացող միջոցներ (ներառյալ՝ օժանդակ լվացող միջոցները) և մաքրող միջոցներ՝ օճառ պարունակող կամ չպարունակող (բացի 3401 ապրանքային դիրքի միջոցներից)	օճառ»:

Հոդված 2. Օրենքի 9.3-րդ հոդվածում՝

3-րդ և 4-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Դրոշմապիտակները տրամադրվում են «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի բաղկացուցիչ մասը կազմող 2-րդ հավելվածով սահմանված կարգով՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված՝ դրոշմապիտակի ձեռք բերման հայտի (այսուհետ՝ հայտ) հիման վրա: Դրոշմապիտակները տրամադրվում են դրանց ձեռք բերման համար հայտ ներկայացրած կազմակերպության լիազորած ֆիզիկական անձին, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջը կամ նրա լիազորած ֆիզիկական անձին, եթե դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կամ ներմուծողի կողմից դրոշմապիտակների պահանջվող քանակության համար կատարվել է վճարում: Ընդ որում, հայտով պահանջվող դրոշմապիտակների քանակության համար վճարման ենթակա գումարը կարող է պակասեցվել դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կամ ներմուծողի կողմից նախկինում ստացված դրոշմապիտակների համար ավել վճարված և հայտի ներկայացման օրվա դրությամբ չհաշվանցված և (կամ) չվերադարձված գումարների չափով:

4. Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող և (կամ) ներմուծող՝

1) կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ սույն մասի 2-րդ կետում նշված դեպքերի) մինչև ապրանքների իրացումը (իսկ ցանկության դեպքում՝ մինչև ապրանքների արտադրությունը կամ ներմուծումը) էլեկտրոնային եղանակով կատարում են գրանցումներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մինչև ապրանքների իրացումը էլեկտրոնային եղանակով ճշգրտումներ են կատարում այդ գրանցումներում.

2) օրենքով սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող համարվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը կարող են մինչև ապրանքների իրացումը էլեկտրոնային եղանակով գրանցումներ չկատարել, եթե գրանցման ենթակա բոլոր տվյալները (բացառությամբ տրամադրվելիք դրոշմապիտակների սերիաների ու հերթական համարների) նշում են դրոշմապիտակների ձեռք բերման հայտում: Սույն կետում նշված հարկ վճարողները անհրաժեշտության դեպքում կարող են, մինչև ապրանքների իրացումը, էլեկտրոնային եղանակով գրանցումներ կատարելու միջոցով ճշգրտել նախկինում իրենց կողմից ներկայացված՝ դրոշմապիտակների ձեռք բերման հայտում նշված տվյալները:

Սույն մասի կիրառության իմաստով՝

ա. մինչև պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների իրացումը էլեկտրոնային եղանակով գրանցումների կատարումը և (կամ) գրանցման ենթակա բոլոր տվյալներով դրոշմապիտակների ձեռք բերման հայտի ներկայացումը չեն դիտվում որպես էլեկտրոնային գրանցումներում կամ դրոշմապիտակների ձեռք բերման հայտում նշված ապրանքների իրացում,

բ. մինչև պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների իրացումը էլեկտրոնային եղանակով գրանցվում են պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների տեսակը, ենթատեսակը (նկարագիրը), տարողությունը (ծավալը, քաշը կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորը), քանակությունը և համապատասխան դրոշմապիտակների սերիաներն ու հերթական համարները (այդ թվում՝ միջակայքերով):».

2) 5-րդ մասում «Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ դրոշմապիտակների տրամադրման պայմանները բավարարված լինելու» բառերով, իսկ «5» թիվը՝ «3» թվով.

3) 7-րդ մասում «և հաշվետվության ձևերը» բառերը փոխարինել «ձևը» բառով:

Հոդված 3. Օրենքի 9.4-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Դրոշմավորված ապրանքի վրա պետք է փակցված լինի չվնասված, ամբողջական և դրոշմավորման ենթակա ապրանքի տարողությանը (ծավալին, քաշին կամ տվյալ

ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորին) համապատասխանող դրոշմապիտակ:»:

Հոդված 4. Օրենքի 9.5-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Դրոշմապիտակների նմուշները (այդ թվում՝ ձևը, գույնը) և տեխնիկական պահանջները սահմանում է հարկային և մաքսային վերադաս մարմինը: Ներմուծվող և տեղական արտադրության ապրանքների դրոշմապիտակները պետք է տարբերվեն գույներով և համապատասխանաբար «ներմուծված» կամ «տեղական» մակագրություններով:

Դրոշմապիտակի վրա պետք է անզեն աչքով տեսանելի նշված լինեն (կամ դրոշմապիտակը պետք է հնարավորություն ընձեռի Apple iOS 6, Android 4, Windows Phone 8, ինչպես նաև համարժեք կամ առավել բարձր օպերացիոն համակարգերից որևէ մեկով աշխատող համընդհանուր օգտագործման էլեկտրոնային շարժական սարքի (բջջային հեռախոս, պլանշետ և այլն) միջոցով տեսանելի դարձնել) ապրանքն արտադրողի կամ ներմուծողի անվանումը, հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, ապրանքի տեսակը, ենթատեսակը (նկարագիրը), ապրանքի տարողությունը (ծավալը, քաշը կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորը, բացառությամբ սույն օրենքի 9.2-րդ հոդվածով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 3304, 3305, 3401 և 3402 ծածկագրերին դասվող այն ապրանքների դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակների, որոնց համար հնարավոր չէ սահմանել համապատասխան չափման միավոր):»:

Հոդված 5. Օրենքի 9.6-րդ հոդվածում՝

1-ին մասի «Օգտագործված» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տարածքում իրացված ապրանքների դրոշմավորման համար օգտագործված» բառերով, և նույն մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կամ ներմուծողի կողմից նախկինում ստացված դրոշմապիտակների համար վճարման ենթակա գումարներից ավելի վճարված գումարները դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կամ ներմուծողի կողմից ներկայացված դիմումի հիման վրա օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվանցվում են հարկ վճարողի առկա և (կամ) հետագա հարկային պարտավորությունների դիմաց, իսկ դրանց բացակայության դեպքում՝ վերադարձվում: Դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կամ ներմուծողի կողմից նախկինում ստացված դրոշմապիտակների համար վճարման ենթակա գումարներից ավելի

վճարված գումարները կարող են հաշվանցվել նաև նոր ձեռք բերվող դրոշմապիտակների համար վճարման ենթակա գումարի դիմաց:».

6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Պիտանելիության ժամկետը լրացած, սահմանված կարգով դուրս գրված ապրանքների վրա փակցված դրոշմապիտակների համար վճարված գումարով նախկինում նվազեցված հարկային պարտավորությունների գումարի չափով արտադրողի կամ ներմուծողի մոտ այդ ապրանքների դուրս գրման օրվա դրությամբ առաջանում է դրոշմապիտակների գծով պարտավորություն: Սույն մասին համապատասխան առաջացող՝ դրոշմապիտակների գծով չմարված պարտավորության գումարի նկատմամբ հաշվարկվում են օրական տույժեր՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով և չափով: Սույն մասով սահմանված՝ դրոշմապիտակների գծով պարտավորությունների հաշվարկման և մարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:».

7-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հարկային կամ մաքսային մարմինը դրոշմապիտակներ վերադարձնելու մասին դիմումը ստանալուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, ստուգում է վնասված դրոշմապիտակների համապատասխանությունը սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջներին և ընդունում է որոշում օրենքի պահանջներին դրանց համապատասխանության մասին: Չօգտագործված դրոշմապիտակները հետ են ընդունվում առանց սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջներին դրանց համապատասխանությունը ստուգելու: Չօգտագործված դրոշմապիտակների համար վճարված գումարը հաշվանցվում է հարկ վճարողի հարկային և պարտադիր վճարների գծով պարտավորությունների դիմաց, իսկ դրանց բացակայության դեպքում վերադարձվում է հարկ վճարողին: Վնասված և հետ ընդունված կամ հետ չընդունված դրոշմապիտակների համար վճարված գումարը վերադարձման ենթակա չէ:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո:

Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 1602, 1604, 1605, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2209 00, 3304, 3305, 3401, 3402 ապրանքային խմբերին դասվող ապրանքների) արտադրող կամ ներմուծող հանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը արտադրված կամ ներմուծված՝ դրոշմապիտակներով

չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2014 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 1602, 1604, 1605, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2209 00, 3304, 3305, 3401, 3402 ապրանքային խմբերին դասվող ապրանքների) իրացնող անձանց կողմից մինչև 2014 թվականի հոկտեմբերի 1-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

ԱՏԳ ԱԱ 3304, 3305, 3401, 3402 ապրանքային խմբերին դասվող ապրանքներ արտադրող կամ ներմուծող հանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը արտադրված կամ ներմուծված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա՝ ԱՏԳ ԱԱ 3304, 3305, 3401, 3402 ապրանքային խմբերին դասվող ապրանքներ իրացնող անձանց կողմից մինչև 2015 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2015 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

ԱՏԳ ԱԱ 1602, 1604, 1605, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2209 00 ապրանքային խմբերին դասվող ապրանքներ արտադրող կամ ներմուծող հանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը արտադրված կամ ներմուծված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2015 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

6. Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա՝ ԱՏԳ ԱԱ 1602, 1604, 1605, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2209 00 ապրանքային խմբերին դասվող ապրանքներ իրացնող անձանց կողմից մինչև 2015 թվականի հոկտեմբերի 1-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2016 թվականի մարտի 31-ը ներառյալ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը
ԱԺ պատգամավոր՝ Վ.Այվազյան	**Հոդված 2.**	Օրենքի 9.3-րդ հոդվածի 3-րդ մասում՝ ա/ «անձի» բառը փոխարինել «կազմակերպության լիազորած ֆիզիկական անձին, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջը կամ նրա» բառերով, բ/ երկրորդ նախադասության «ներմուծողի կողմից» բառերից հետո լրացնել «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի բաղկացուցիչ մասը կազմող թիվ 2 հավելվածով սահմանված կարգով » բառերը: 2. 4-րդ մասում «(այդ թվում՝» բառերը փոխարինել «(իսկ ցանկության դեպքում՝» բառերով:	Ընդունվել է Մասը խմբագրվել է Հաշվետվություն ներկայացնելու պահանջը հանվել է Ընդունվել է

		3. 4-րդ մասում բ. Ենթակետում «տարողությունը» բառից հետո լրացնել «(ծավալը, քաշը կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորը),» բառերը:	Մասը խմբագրվել է Ընդունվել է Մասը խմբագրվել է
ԱԺ պատգամավոր՝ Վ.Այվազյան	**Հոդված 3.**	Օրենքի 9.4-րդ հոդվածի 4-րդ մասում՝ «տարողությունը» բառից հետո լրացնել «(ծավալին, քաշին կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորին),» բառերը:	Ընդունվել է Կետը խմբագրվել է
ԱԺ պատգամավոր՝ Վ.Այվազյան	**Հոդված 4.**	Օրենքի 9.5-րդ հոդվածի՝ 1. 1-ին մասից հանել «ըստ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքատեսակների և տարողության» բառերը իսկ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն» բառերը փոխարինել «հարկային և մաքսային վերադաս մարմինը» բառերով: 2. 1-ին մասը լրացնել նոր պարբերությամբ. Դրոշմապիտակի վրա պետք է անզեն աչքով տեսանելի ձևով նշված լինի կամ դրոշմապիտակը պետք է հնարավորություն ընձեռի Apple iOS 6, Android 4, Windows Phone 8, ինչպես նաև համարժեք կամ առավել բարձր օպերացիոն	Ընդունվել է Կետը խմբագրվել է Ընդունվել է Կետը խմբագրվել է

		համակարգերից որևէ մեկով աշխատող համընդհանուր օգտագործման էլեկտրոնային շարժական սարքի (բջջային հեռախոս, պլանշետ և այլն) միջոցով տեսանելի դարձնել ապրանքն արտադրողի կամ ներմուծողի անվանումը, հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, ապրանքի տեսակը, ենթատեսակը (նկարագիրը), ապրանքի տարողությունը (ծավալը, քաշը կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորը, բացառությամբ սույն օրենքի 9.2-րդ հոդվածով սահմանված՝ ԱՏԳ ԱԱ 3304, 3305, 3401 և 3402 ծածկագրերին դասվող այն ապրանքների դրոշմավորման համար նախատեսված դրոշմապիտակների, որոնց համար հնարավոր չէ սահմանել համապատասխան չափման միավոր):»:	
ԱԺ պատգամավոր՝ Վ.Այվազյան	**Հոդված 5.**	Օրենքի 9.6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 1-ին մասում՝ «Օգտագործված» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տարածքում իրացված ապրանքների դրոշմավորման համար օգտագործված» բառերով, բ. Ենթակետում՝ «նախադասություններ» բառը փոխարինել «պարբերությամբ» բառով: 3.հանել 5-րդ մասը	Ընդունված է մասը խմբագրվել է Ընդունված է Կետը խմբագրվել է Ընդունված է Կետը խմբագրվել է

ԱԺ պատգամավորներ՝ Հ.Բիշարյան, Հ.Մարգարյան, Մ.Շահգելդյան	Օրենքի նախագծի	Դրոշմապիտակները տրամադրվում են սույն օրենքով սահմանված կարգով՝ դրանց ստացման համար լիազորված անձի կողմից հայտը ներկայացնելու պահից եռօրյա ժամկետում: Դրոշմապիտակների տրամադրման եռօրյա ժամկետը խախտելու դեպքում հարկային մարմնի համապատասխան աշխատակիցը ենթարկվում է պատասխանատվության:	Առաջարկության 1-ին մասն ընդունվել է ժամկետը խմբագրվել է, իսկ 2-րդ մասի հետ կապված՝ օրենսդրությամբ պատասխանա-տվության տե-սակները սահ-մանված են
		Դրոշմապիտակների շրջանառության ամփոփ հաշվետվությունը ներկայացվում է տարեկան կտրվածքով ՝ առանց յուրաքանչյուր անգամ դրանք ստանալու համար ներկայացվող հայտում հաշվետվություն ներկայացնելու:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն նախագծի 2-րդ հոդվածում և օրենքի 9.3-րդ 7-րդ մասում
		Յուրաքանչյուր նախորդ տարվա համար ստացած դրոշմապիտակների ամբողջ սպառված ծավալի համար տնտեսվարող սուբյեկտը իր հարկային պարտավորությունները կատարում է մինչև հաջորդ տարվա առաջին	Հարկային պար-տավորությունների կատարման կարգն ու

		եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 30-ը:	ժամկետները սահմանված են առանձին հար-կատեսակների մասին օրենքներով և դա դրոշմապիտակներով կարգավորման ենթակա չէ
		Տնտեսվարող սուբյեկտի կողմից ստացված, սակայն չօգտագործված դրոշմապիտակների մնացորդի ծավալի առկայությունը չի կարող հիմք հանդիսանալ դրանց նոր խմբաքանակի ստացման հայտը մերժելու համար:	Ընդունելի է Գործող օրենքով չօգտագործված դրոշմապիտա-կների մնացորդի առկայությունը հայտի մերժման հիմք համարելու դրույթ սահմանված չէ
		Դրոշմապիտակի վրա նշված՝ տնտեսվարող սուբյեկտի տվյալները և արտադրանքի մասին այլ տեղեկությունները էապես կրճատել՝ թողնելով տարողության մասին նշումը և կոդը, ինչը հնարավորություն կտա նվազեցնել դրոշմապիտակի արժեքը՝ այն հասցնելով մինչև 1 դրամի և թույլ կտա տնտեսվարող սուբյեկտին արտադրական պրոցեսում խուսափել	էլեկտրոնային եղանակով դրոշմապիտակիցտեղ եկությունների հասանելիությունը

		թյուրիմացություններից:	դրոշմապիտակի արժեքի վրա ազդեցություն չի թողնում
		Օրենքը գործողության մեջ դնել 2015թվ. հունվարի 1-ից, որը թույլ կտա տնտեսվարող սուբյեկտների շրջանում իրականացնել մանրակրկիտ իրազեկում և նախապատրաստական աշխատանքներ:	Նախագծով նախատեսված են անցումային դրույթներ, որոնք սահմանում են չդրոշմավորված ապրանքների իրացման փուլային ժամկետներ, հաշվի առնելով նաև դրոշմավորման ենթակա ապրանքների առանձնահատ-կությունները:
		Նախագծում առանձին ամրագրել, որ սույն օրենքի դրույթները չեն տարածվում գյուղացիական տնտեսություններ ունեցող ֆիզիկական անձանց կողմից պատրաստված արտադրանքի իրացման հարաբերությունների վրա:	Ընդունելի է Օրենքով արդեն իսկ ամրագրված է, որ դրոշմա-պիտակներով դրոշմավորման պարտավորություն են

			կրում դրոշմավորման ենթակա ապ-րանքներ արտա-դրող կամ ներ-մուծող կազմա-կերպությունները և անհատ ձեռ-նարկատերերը
ՀՀ ԱԺ պատգամավոր է. Մարուքյան 030-Ե-52 13.05.2014թ.		ՀՀ ԱԺ-ն 2012թ. դեկտեմբերի 19-ին ընդունել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի ուժով մի շարք ապրանքների համար սահմանվեց օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի պարտադիր առկայության պահանջ: Համաձայն անցումային դրույթների՝ օրենքը տարածվել է 2013թ. հուլիսի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա, սակայն մինչև այդ ապրանքների արժեքը թանկացավ: Ներկայացված նախագծով սահմանվում է, որ ՀՀ տարածքում արտադրված կամ ՀՀ տարածք ներմուծված՝ շշալցված, փաթեթավորված կամ ցանկացած այլ ձևով տարայավորված՝ նախագծում ներկայացված աղյուսակում ներառված ապրանքների վրա օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե օրենքով սահմանված՝ համապատասխան ծածկագրով ապրանքային դիրքում ընդգրկվող ապրանքները արտադրողի կամ այլ փաթեթավորողի կողմից փաթեթավորված (չափածրարված), շշալցված կամ այլ կերպ տարայավորված են՝ նույն փաթեթավորմամբ ու ապրանքային տեսքով, առանց քաշը (ծավալը) փոփոխելու, մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար : Հետևաբար,	Նախագծով, ելնելով ապրան-քային տեսականու առանձնահատկությու ններից նախա-տեսված են փուլային ժամ-կետներ, որոնք հնարավորություն կտան կանո-նակարգել իրաց-ման հետ կապ-ված հարցերը, ինչպես նաև գնաճային ճնշումները: Բացի այդ ապրանքների վրա, օրինակ՝ կաթնամթերքի վրա դրոշմավորումը

		այս դեպքում ևս սպասելի է աղյուսակում նշված ապրանքների գնաճ, իսկ դրանք առաջնային սպառման ապրանքներ են : Ակնհայտ է, որ այդ ապրանքատեսակների գնաճը ներկա սոցիալական պայմաններում չափազանց անցանկալի արդյունքների կբերի : Օրենքի ուժի մեջ մտնելը երկարաձգելու պարագայում խնդրի հետ կառընչվենք նաև նախագծի 6-րդ հոդվածում նշված ապրանքների դեպքում : Ընդ որում, 3-րդ մասում նշվող ապրանքների դեպքում հնարավոր է նախատեսել համեմատաբար ավելի երկար ժամկետներ, քանի որ դրանք ավելի երկար պահպանվող են և դրանց սպառման համար անհրաժեշտ է համեմատաբար ավելի երկար ժամկետ սահմանել : Հաշվի առնելով վերոշարադրյալը և այն հանգամանքը, որ տարեվերջին սոցիալական վիճակը համեմատաբար կայուն կլինի՝ առաջարկում եմ նախագծով սահմանել , որ այն ուժի մեջ է մտնում 2015թ. հունվարի 1-ից, ըստ այդմ՝ նախագծի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասում «սեպտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «2015թ. մարտի 31-ը» բառերով, 2-րդ մասում «հոկտեմբերի 1-ը» բառերը փոխարինել «փետրվարի 1-ը», իսկ «դեկտեմբերի 31-ը»՝ «ապրիլի 31-ը» բառերով, 3-րդ մասում «2014թ. դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2015թ. ապրիլի	հունվար ամսից կիրառելու դեպքում գնաճն ավելի նկատելի կլինի:

		30-ը» բառերով, 4-րդ մասում «2015թ. հունվարի 1-ը» բառերը փոխարինել «2015թ. մարտի 1-ը» բառերով, իսկ «2015թ. հունիսի 30-ը» բառերը փոխարինել «2015թ. օգոստոսի 31-ը» բառերով, 5-րդ մասում «2015թ. սեպտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «2016թ. հունվարի 1-ը» բառերով, 6-րդ մասում «2015թ. հոկտեմբերի 1-ը» բառերը փոխարինել «2016թ. փետրվարի 1-ը» բառերով, իսկ «2016թ. մարտի 31-ը» բառերը փոխարինել «2016թ. հուլիսի 31-ը» բառերով:	